«ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐՈՎ 80 ՓԱՍՏԱԲԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՎԵՑ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ

15.07.2022 18:57

2022 թվականի հուլիսի 15-ին «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» ծրագրի շրջանակներում 80 փաստաբանի հանձնվեցին մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը, ֆրանսահայ բարերար Ռայմոն Եզեգելյանի կինը՝ Ռագիբ Օռելին, դուստրը՝ Մարի Եզեգելյանը, շահառու փաստաբանները և այլ հյուրեր:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկաներին ներկայացրեց ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, ֆրանսահայ փաստաբան բարերար Ռայմոն Եզեգելյանի հետ համագործակցության երկարամյա ուղին և նրա նվիրական գործունեության կարևորությունը Փաստաբանների պալատի և հայ փաստաբանների համար:

Շնորհակալություն հայտնելով Ռայմոն Եզեգելյանի ընտանիքին՝ Սիմոն Բաբայանը առողջություն ու երկարակեցություն մաղթեց ֆրանսահայ փաստաբանին, շեշտելով, որ մեծ է նրա ավանդը Փաստաբանների պալատի տարբեր ծրագրերի իրականացման գործում:

Փաստաբանների պալատի նախագահը նաև ընդգծեց, որ առկա համագործակցությունը մեծ օժանդակություն է շահառու փաստաբանների համար:

Դիմելով բարերար փաստաբանի ընտանիքին՝ իր խորին շնորհակալությունը հայտնեց և Ռայմոն Եզեգելյանին առողջություն մաղթեց նաև ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը:

Արա Ջոհրաբյանը նաև հավելեց, որ ֆրանսահայ փաստաբան Ռայմոն Եզեգելյանի շնորհիվ բազմաթիվ գաղափարներ են կյանքի կոչվել ՀՀ փաստաբանների պալատում և Փաստաբանական դպրոցում:

Միջոցառման ընթացքում շահառու փաստաբաններին հավաստագրեր հանձնեց Ռայմոն Եզեգելյանի դուստրը՝ Մարի Եզեգելյանը:

Նշենք նաև, որ «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» ծրագրի շահառուները որոշվել են՝ ըստ կարգի նշված առաջնահերթության:

Բեռնել «80 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» տրամադրելու մասին» կարգը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })